# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**03.04.2015թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի $77^{1}$-$77^{6}$ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի հունվարի 19-ի N 6-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վլիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ Արմեն Շահվերդյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Մարինե Դավթյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Միեր Մելիքյանի, քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Սեյրան Ծատուրյանի, բնապահպանության բաժնի պետ Վրտակ Դեմիրչյանի և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Սառատյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, առևտրի և ծառայությունների, քաղաքաշինության, կապի, առողջապահության, ՔԿԱԳ, կրթության, մշակույթի, բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 2 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Օձուն համայնքի ղեկավարին:

| | |
|---|---|
| Ալիկ Սահակյան | |
| Արմեն Շահվերդյան | |
| Արտավազդ Բեջանյան | |
| Էդգար Հախվերդյան | |
| Ժիրայր Բասմաջյան | |
| Գագիկ Հախինյան | |
| Մարինե Դավթյան | |
| Սեյրան Ծատուրյան | |
| Անահիտ Բարդյան | |
| Միեր Մելիքյան | |
| Սամվել Խառատյան | |
| Արտակ Դեմիրչյան | |

Համայնքի ղեկավար՝
Արսեն Տիտանյան